ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2015 թ. հունվարի 14 **N 3 -Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՆԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2014 թվականի փետրվարի 19-ի N 48-Լ հրամանով հաստատված՝ 2014 թվականին Հայաստանի Հանրապետության մարզերում իրականացվող տեսչական ստուգումների ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշնակ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ քաղաքացի Մ. Մանուկյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի սահմաններում պարսպապատման միջոցով ընդգրկվել է մոտ 0.012 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողամաս:

Աշնակ համայնքի ղեկավար Գևորգ Մարտիրոսյանը խախտել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի և 2-րդ կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^{9}-րդ և 54-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

1. Աշնակ գյուղական համայնքի ղեկավար Գևորգ Մարտիրոսյանի նկատմամբ նշանակել տուգանք մեկ հարյուր հիսուն հազար դրամ, որն ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ քան 15 օրվա ընթացքում՝ h/h 900005243119:
2. Սույն որոշման պատճեն երեք օրվա ընթացքում հանձնել Աշնակ համայնքի ղեկավար Գևորգ Մարտիրոսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշնակ համայնքի ղեկավար Գևորգ Մարտիրոսյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով 10 օրվա ընթացքում:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ